ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2023 թթ. մշտադիտարկման արդյունքները

ԳԱՎԱՌ 2023

Մշտադիտարկումը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից՝ 2023թ. դեկտեմբերի 28-ին։

Որակի ապահովման բաժնի վարիչի՝ Հայրապետյան Ք.

մասնագետներ՝ Նախրատյան Մ.,

Մուրադյան Ն.

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2023թ. մշտադիտարկում

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) գիտական խորհրդի երաշխավորությամբ 2023թ. տպագրվել է Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների 2 ժողովածու՝ 14-րդ, 15-րդ, որոնք ընդգրկված են ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ճանաչված՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

2023թ. Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների 2 ժողովածուներում տպագրվել է թվով 80 հոդված՝ 14-րդ ժողովածուում երաշխավորվել է տպագրության 35 հոդված, 15-րդ ժողովածուում՝ 45:

Գծապատկեր 1.



Գավառի պետական համալսարանի 2023թ. գիտական հոդվածների ժողովածուներում հոդվածներ են տպագրել ինչպես ԳՊՀ դասախոսները, վարչական աշխատակիցները, դասախոսների հետ համահեղինակությամբ ուսանողները, շրջանավարտները, այնպես էլ այլ բուհերի դասախոսներ, երիտասարդ գիտնականներ և հանրակրթական դպրոցների ուսուցիչներ:

ԳՊՀ ժողովածուում ընդգրկված են գիտություն հետևյալ բնագավառները.

1. Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ,
2. Քիմիական գիտություններ,
3. Կենսաբանական գիտություններ,
4. Տեխնիկական գիտություններ,
5. Էկոլոգիական գիտություններ,
6. Գյուղատնտեսական գիտություններ,
7. Պատմական գիտություններ,
8. Տնտեսական գիտություններ,
9. Փիլիսոփայական գիտություններ,
10. Բանասիրական գիտություններ,
11. Իրավաբանական գիտություններ,
12. Մանկավարժական գիտություններ,
13. Հոգեբանական գիտություններ,
14. Սոցիոլոգիական և քաղաքական գիտություններ,
15. Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն։

ԳՊՀ գիտական ժողովածուում տպագրված հոդվածների քանակն՝ ըստ ԳՊՀ ֆակուլտետների և ամբիոնների

Աղյուսակ 1.

Հ/հ	Ֆակուլտետ	Ամբիոն	Ըստ ամբիոնների	2022թ.	Ըստ ամբիոնների	2023 թ.
1.	Բանասիրական	Հայոց լեզվի և գրականության	7	12	12	18
		Օտար լեզվի և գրականության	5		6	
2.	Բնագիտական	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ	5	12	2	7
		Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	7		5	
3.	Հումանիտար մասնագիտությունների	Իրավագիտության	5	14	4	12
		Հասարակական գիտությունների	9		8	
4.	Տնտեսագիտական	Կառավարման և ֆինանսների	3	5	3	4
		Հաշվապահական հաշվառման	2		1	
5.	Ընդամենը		43		41	

2022 թվականին տպագրված հոդվածների թվաքանակով 1-ին տեղում Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետն է՝ 14 հոդված: Մյուս ֆակուլտետների համեմատությամբ՝ թվով քիչ հոդված ներկայացվել է Տնտեսագիտական ֆակուլտետի կողմից՝ 5 հոդված, իսկ ըստ ամբիոնների՝ հաշվապահական հաշվառման ամբիոնը՝ 2 հոդված:

2023թ. հոդվածների թվաքանակով 1-ին տեղում Բանասիրական ֆակուլտետն է՝ 18 հոդված, ի տարբերություն անցած տարվա՝ նկատվել է թվաքանակի աճ՝ 6 հոդվածով, իսկ ըստ ամբիոնների՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնը՝ 12 հոդված: Մյուս ֆակուլտետների համեմատությամբ՝ թվով քիչ հոդված ներկայացվել է Տնտեսագիտական ֆակուլտետի կողմից՝ 4 հոդված, իսկ ըստ ամբիոնների՝ հաշվապահական հաշվառման ամբիոնը՝ 1 հոդված:

2022 և 2023 թվականների հոդվածների քանակն՝ ըստ ֆակուլտետների

Գծապատկեր 2.



2022 և 2023 թվականների հոդվածների քանակն՝ ըստ ամբիոնների

Գծապատկեր 3.



Անցկացնելով համեմատություն 2022 և 2023 թվականների ամբիոններում տպագրված հոդվածների քանակի վերաբերյալ, ապա արձանագրում ենք, որ միայն հայոց լեզվի և գրականություն, օտար լեզվի և գարկանություն ամբիոններում է ավելացել հոդվածների քանակը, կառավարման և ֆինանսների ամբիոնի հոդվածների քանակը մնացել է նույնը: ԳՊՀ մանացած ամբիոններում

Համահեղինակությամբ տպագրված հոդվածների քանակն՝ ըստ տարիների

Աղյուսակ 2.

Տարիները	ԳՊՀ դասախոս և ուսանող	ԳՊՀ դասախոս և շրջանավարտ	ԳՊՀ դասախոսներ	ԳՊՀ դասախոս և այլ բուհերի ներկայացուցիչներ	Այլ բուհերի ներկայացուցիչներ, գիտաշխատողներ	Ընդամենը
2022թ.	**6**	**1**	**4**	**8**	**19**	**38**
2023թ.	**1**	**5**	**3**	**10**	**15**	**34**

Գծապատկեր 4.



Ըստ վերը նշված տվյալների՝ 2022 թվականին համահեղինակությամբ տպագրվել է 38 հոդված, իսկ 2023 թվականին՝ 34 հոդված: 2023 թվականին համահեղինակությամբ հոդվածների թվաքանակի նվազում է արձանագրվել՝ 4 հոդվածով:

ԳՊՀ ուսանողների և շրջանավարտների հետ համահեղինակությամբ տպագրված հոդվածների քանակն՝ ըստ ֆակուլտետների

Աղյուսակ 3.

Ֆակուլտետ	Տարիները	ԳՊՀ դասախոս և ուսանող	ԳՊՀ դասախոս և շրջանավարտ	Ընդհանուր հոդվածներ քանակը
Բանասիրական	2022թ.	2	1	3
	2023թ.	1	4	5
Բնագիտական	2022թ.	2	0	2
	2023թ.	0	0	0
Հումանիտար մասնագիտությունների	2022թ.	0	0	0
	2023թ.	0	1	1
Տնտեսագիտական	2022թ.	1	0	1
	2023թ.	0	0	0

ԳՊՀ դասախոսների, ուսանողների և շրջանավարտների հետ համահեղինակությամբ տպագրված հոդվածների քանակով և՛ 2022թ., և՛ 2023թ.առաջին տեղում բանասիրական ֆակուլտետն է։

Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների 2 ժողովածուներում՝ 14-րդ, 15-րդ, ընդգրկվել են նաև ՀՀ այլ բուհերի դասախոսների, գիտահետազոտական ինստիտուտների գիտաշխատողների, ասպրանտների ինչպես անահատական, այնպես էլ համահեղինակությամբ 42 հոդվածներ։

Արդյունքում՝ 2023 թ. Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների 2 ժողովածուներում տպագրվել է 80 հոդված, այդ թվում համահեղինակությամբ և անհատական հոդվածներ ներկայացրել են ԳՊՀ 49 ներկայացուցիչ, այլ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, կազմակերպությունների 72 ներկայացուցիչ։

2022 թվականին ԳՊՀ-ի գիտական հոդվածների 2 ժողովածուներում տպագրվել է 83 հոդված, այդ թվում համահեղինակությամբ և անհատական հոդվածներ ներկայացրել են ԳՊՀ 56 ներկայացուցիչ, այլ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, կազմակերպությունների 90 ներկայացուցիչ։

2023 թվականին ԳՊՀ ներկայացուցիչների համահեղինակությամբ և անհատական հոդվածների նվազում է արձանագրվել՝ 7-ով, ինչպես այլ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, կազմակերպությունների ներկայացուցիչների՝ 18-ով։

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2022-2023 թթ. մշտադիտարկման արդյունքները՝ կարող ենք նշել հետևյալը.

1. Համեմատելով ԳՊՀ գիտական հոդվածների երկու տարիների չորս ժողովածուների հոդվածների քանակը՝ գրանցվել է 3 հոդվածի տարբերություն: 2022 թ. տպագրվել է 83 հոդված, 2023 թ.՝ 80:
2. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից 2022թ. տպագրվել է 43 հոդված, իսկ 2023թ.՝ 41 հոդված:
3. 2023թ. այլ բուհերի դասախոսների, գիտաշխատողների կողմից ներկայացված հոդվածների քանակը, համեմատությամբ 2022թ., նվազել է է՝ 41-ից դառնալով 39 հոդված: Կարելի է ասել, որ էական մեծ տարբերություն չկա: ԳՊՀ գիտական հոդվածների երկու ժողովածուներն ընդգրկված են Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ճանաչված՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում, ինչպես նաև յուրաքանչյուր հոդվախին տրվում է DOI:
4. 2023թ. հոդվածների թվաքանակով 1-ին տեղում Բանասիրական ֆակուլտետն է՝ 18 հոդված, իսկ ըստ ամբիոնների՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնը՝ 12 հոդված: Մյուս ֆակուլտետների համեմատությամբ՝ թվով քիչ հոդված ներկայացվել է Տնտեսագիտական ֆակուլտետի կողմից՝ 4 հոդված, իսկ ըստ ամբիոնների՝ հաշվապահական հաշվառման ամբիոնը՝ 1 հոդված: 2022 թվականին Տնտեսագիտական ֆակուլտետը ներկայացրել է նույնպես համեմատած մյուս ֆակուլտետների թվով քիչ հոդված:

ԳՊՀ ՈԱԲ-ն, ամփոփելով մշտադիտարկման արդյունքներն, առաջարկում է.

1. Ֆակուլտետների, ամբիոնների կողմից հետևողական աշխատանքներ իրականացնել՝ խթանելով դասախոսների գիտահետազոտական

գործունեությունը, դասախոս և ուսանող համատեղ հետազոտությունների կատարումը և հրապարակումը։

2. Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ նվիրված գիտական հետազոտության մեթոդաբանությանը և գործիքակազմին՝ ներգրավելով ինչպես պրոֆեսորադասախոսական կազմին, այնպես էլ ուսանողներին և արտաքին շահակիցներին։

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2023թ. մշտադիտարկման արդյունքները, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են համապատասխան ստորաբաժանումներ (մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնող ամբիոններ, ֆակուլտետներ), որպեսզի ուսումնասիրվեն և ԳՊՀ ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան առաջարկություններ՝ ԳՊՀ-ում գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացման, ուսումնական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրման նպատակով։